# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐՈՒՄ ՏԵՂԵԿԱՅՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/006

ք. Երևան «19» Մարտի 2021թ.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեն», ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի, որը գործում է «ՀՀ պետական եկամուտների կոմիտեն»-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գոռ Զատիկյանի, որը գործում է Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շենքերում տեղեկայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 2,780,000 (երկու միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

**Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:**

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե | «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ |
| ք.Երևան, Մ. Խորենացի 3,7 | ՀՀ, ք.Երևան, Ն. Տիգրանյան 27 |
| ՀՎՀՀ 02647057 | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011054013 | Հ/Հ 2050022113371001 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի | ՀՎՀՀ 00067177 |
| գործառնական վարչություն | Տնօրեն |
| Գլխավոր քարտուղար | |
| **Է. Գևորգյան** _____ | **Գ. Զատիկյան** _____ |
| /ստորագրություն/ Կ.Տ/ | /ստորագրություն/ Կ.Տ/ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*« 19 » Մարտի 2021թ. կնքված*
*ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/006 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/Հ | Անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Միավոր ծառայության առավելագույն արժեքը (ՀՀ դրամ) | Ծառայության մատուցման վայրը | Առավելագույն ընդհանուր գին (ՀՀ դրամ) | Ծառայության մատուցման ժամկետ |
|---|---|---|---|---|---|---|
| 4. | Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ CPV 50711100/4 | **Տեխնիկական սպասարկում** | | Կոտայքի մարզ՝ ք. ք. Աբովյան Բարեկամության հրապարակ 1, ք. Հրազդան Սպանդարյան 24/1 | 900,000 | Ծառայության մատուցումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված առավելագույնը 360 օրացուցային օրվա ընթացքում |
| | | **Ellips մակնիշի մուտք և ելք վերահսկող սարք թվով 2 հատ (Турникет)** | | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի մայրական սալիկի/ղեկավարման վահանակի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 120000 | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի պտտման արագության հսկիչ դետալի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 27000 | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի պտտման արագության կարգավորման զսպանակի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 22000 | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի ձողերի ֆիքսման պտուտակի(Болт) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 5000 | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի ձողերի էլեկտրամագնիսական ֆիքսատորի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 28000 | | | |
| | | Քարտ կարդացող սարքերի ղեկավարման վահանակ փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 105000 | | | |
| | | Քարտ կարդացող մոդուլ փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 28000 | | | |
| | | Մարտկոցի հնարավորությամբ հոսանքի սնուցման բլոկի (12Վ, 10Ա) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 27000 | | | |
| | | Մարտկոցի (12Վ, 7,5Ա) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 9500 | | | |
| | | Հեռակառավարմամբ ելքի վահանակի (ընդունիչ և հաղորդիչ) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 22000 | | | |
| | | Հեռակառավարմամբ ելքի վահանակի կրկնօրինակի (հաղորդիչ) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 4500 | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | USB-ով քարտ գրանցող սարքի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 18000 | | | |
| | | Սարքերի վերանորոգման աշխատանքներ, խնդիրների ուսումնասիրություն և հնարավորության դեպքում կարգավորում, ինչպես նաև յուղման, մաքրման, ձգման և կարգավորման աշխատանքներ: | 50000 | | | |
| | | **Ընդամենը** | 466,000 | | | |
| | | **Կատարողի առաջարկած հանրագումարային գին** | 465,960 | | | |
| 6. | Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ CPV 50711100/11 | **Տեխնիկական սպասարկում** | | Արմավիրի մարզ՝ ք.Էջմիածին Նար Դոս 11 | 470,000 | Ծառայության մատուցումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված առավելագույնը 360 օրացուցային օրվա ընթացքում |
| | | **Ellips մակնիշի մուտք և ելք վերահսկող սարք թվով 1 հատ (Турникет)** | | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի մայրական սալիկի/ղեկավարման վահանակի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 120000 | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի պտտման արագության հսկիչ դետալի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 27000 | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի պտտման արագության կարգավորման զսպանակի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 22000 | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի ձողերի ֆիքսման պտուտակի(Болт) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 5000 | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի ձողերի էլեկտրամագնիսական ֆիքսատորի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 28000 | | | |
| | | Քարտ կարդացող սարքերի ղեկավարման վահանակ փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 105000 | | | |
| | | Քարտ կարդացող մոդուլ փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 28000 | | | |
| | | Մարտկոցի հնարավորությամբ հոսանքի սնուցման բլոկի (12Վ, 10Ա) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 27000 | | | |
| | | Մարտկոցի (12Վ, 7,5Ա) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 9500 | | | |
| | | Հեռակառավարմամբ ելքի վահանակի (ընդունիչ և հաղորդիչ) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 22000 | | | |
| | | Հեռակառավարմամբ ելքի վահանակի կրկնօրինակի (հաղորդիչ) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 4500 | | | |
| | | USB-ով քարտ գրանցող սարքի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 18000 | | | |
| | | Սարքերի վերանորոգման աշխատանքներ, խնդիրների ուսումնասիրություն և հնարավորության դեպքում կարգավորում, ինչպես նաև յուղման, մաքրման, ձգման և կարգավորման աշխատանքներ: | 50000 | | | |
| | | **Ընդայմենը** | 466,000 | | | |
| | | **Կատարողի առաջարկած հանրագումարային գին** | 465,960 | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 7. | Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ CPV 50711100/10 | **Տեխնիկական սպասարկում** | | Արագածոտնի մարզ՝ ք.Աշտարակ Պռոշյան 29 | 470,000 | Ծառայության մատուցումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված առավելագույնը 360 օրացուցային օրվա ընթացքում |
| | | **Ellips մակնիշի մուտք և ելք վերահսկող սարք թվով 1 հատ (Турникет)** | | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի մայրական սալիկի/ղեկավարման վահանակի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 120000 | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի պտտման արագության հսկիչ դետալի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 27000 | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի պտտման արագության կարգավորման զսպանակի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 22000 | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի ձողերի ֆիքսման պտուտակի(Болт) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 5000 | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի ձողերի էլեկտրամագնիսական ֆիքսատորի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 28000 | | | |
| | | Քարտ կարդացող սարքերի ղեկավարման վահանակ փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 105000 | | | |
| | | Քարտ կարդացող մոդուլ փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 28000 | | | |
| | | Մարտկոցի հնարավորությամբ հոսանքի սնուցման բլոկի (12Վ, 10Ա) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 27000 | | | |
| | | Մարտկոցի (12Վ, 7,5Ա) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 9500 | | | |
| | | Հեռակառավարմամբ ելքի վահանակի (ընդունիչ և հաղորդիչ) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 22000 | | | |
| | | Հեռակառավարմամբ ելքի վահանակի կրկնօրինակի (հաղորդիչ) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 4500 | | | |
| | | USB-ով քարտ գրանցող սարքի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 18000 | | | |
| | | Սարքերի վերանորոգման աշխատանքներ, խնդիրների ուսումնասիրություն և հնարավորության դեպքում կարգավորում, ինչպես նաև յուղման, մաքրման, ձգման և կարգավորման աշխատանքներ: | 50000 | | | |
| | | **Ընդամենը** | 466,000 | | | |
| | | **Կատարողի առաջարկած հանրագումարային գին** | 465,960 | | | |
| 8. | Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ CPV | **Տեխնիկական սպասարկում** | | Արարատի մարզ՝ ք.Արտաշատ Օգոստոսի 23 փ. 83 | 470,000 | Ծառայության մատուցումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված առավելագույնը 360 օրացուցային |
| | | **Ellips մակնիշի մուտք և ելք վերահսկող սարք թվով 1 հատ (Турникет)** | | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի մայրական սալիկի/ղեկավարման վահանակի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 120000 | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի պտտման արագության հսկիչ դետալի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 27000 | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 50711100/12 | Մուտք և ելք վերահսկող սարքի պտտման արագության կարգավորման զսպանակի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 22000 | | | օրվա ընթացքում |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի ձողերի ֆիքսման պտուտակի(Болт) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 5000 | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի ձողերի էլեկտրամագնիսական ֆիքսատորի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 28000 | | | |
| | | Քարտ կարդացող սարքերի ղեկավարման վահանակ փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 105000 | | | |
| | | Քարտ կարդացող մոդուլ փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 28000 | | | |
| | | Մարտկոցի հնարավորությամբ հոսանքի սնուցման բլոկի (12Վ, 10Ա) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 27000 | | | |
| | | Մարտկոցի (12Վ, 7,5Ա) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 9500 | | | |
| | | Հեռակառավարմամբ ելքի վահանակի (ընդունիչ և հաղորդիչ) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 22000 | | | |
| | | Հեռակառավարմամբ ելքի վահանակի կրկնօրինակի (հաղորդիչ) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 4500 | | | |
| | | USB-ով քարտ գրանցող սարքի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 18000 | | | |
| | | Սարքերի վերանորոգման աշխատանքներ, խնդիրների ուսումնասիրություն և հնարավորության դեպքում կարգավորում, ինչպես նաև յուղման, մաքրման, ձգման և կարգավորման աշխատանքներ: | 50000 | | | |
| | | **Ընդամենը** | 466,000 | | | |
| | | **Կատարողի առաջարկած հանրագումարային գին** | 465,960 | | | |
| 9. | Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ CPV 50711100/13 | **Տեխնիկական սպասարկում** | | Լոռու մարզ՝ ք. Վանաձոր Վարդանանց 11 | 470,000 | Ծառայության մատուցումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված առավելագույնը 360 օրացուցային օրվա ընթացքում |
| | | **Ellips մակնիշի մուտք և ելք վերահսկող սարք թվով 1 հատ (Турникет)** | | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի մայրական սալիկի/ղեկավարման վահանակի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 120000 | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի պտտման արագության հսկիչ դետալի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 27000 | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի պտտման արագության կարգավորման զսպանակի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 22000 | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի ձողերի ֆիքսման պտուտակի(Болт) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 5000 | | | |
| | | Մուտք և ելք վերահսկող սարքի ձողերի էլեկտրամագնիսական ֆիքսատորի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 28000 | | | |
| | | Քարտ կարդացող սարքերի ղեկավարման վահանակ | 105000 | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | | | | |
| | | Քարտ կարդացող մոդուլ փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 28000 | | | |
| | | Մարտկոցի հնարավորությամբ հոսանքի սնուցման բլոկի (12Վ, 10Ա) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 27000 | | | |
| | | Մարտկոցի (12Վ, 7,5Ա) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 9500 | | | |
| | | Հեռակառավարմամբ ելքի վահանակի (ընդունիչ և հաղորդիչ) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 22000 | | | |
| | | Հեռակառավարմամբ ելքի վահանակի կրկնօրինակի (հաղորդիչ) փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 4500 | | | |
| | | USB-ով քարտ գրանցող սարքի փոխարինում/տեղադրում, ներառյալ նշված ապրանքը | 18000 | | | |
| | | Սարքերի վերանորոգման աշխատանքներ, խնդիրների ուսումնասիրություն և հնարավորության դեպքում կարգավորում, ինչպես նաև յուղման, մաքրման, ձգման և կարգավորման աշխատանքներ: | 50000 | | | |
| | | **Ընդամենը** | 466,000 | | | |
| | | **Կատարողի առաջարկած հանրագումարային գին** | 465,960 | | | |

- **Վճարումն իրականացվում է փաստացի մատուցված ծառայության դիմաց**

**Անհրաժեշտ պայմաններ՝**

- **Վերը նշված կետերում պրոֆիլակտիկ սպասարկման ընթացքում սարքավորումների աշխատանքի մեջ խնդիրներ հայտնաբերելու դեպքում սեփական նախաձեռնությամբ իրականացնել դրանց վերանորոգումը՝ սույն տեխնիկական բնութագրով սահմանված պայմաններով և ժամկետներում:**
- **Արձագանքման ժամանակը Ծառայություն մատուցող ընկերությունը պետք է ձեռնարկի համապատասխան գործողություններ Պատվիրատուի կողմից տեղեկատվությունը Ծառայություն մատուցող ընկերության էլ. փոստի վրա ստանալուց կամ Ծառայություն Մատուցող ընկերությանը հեռախոսով ահազանգելուց հետո առավելագույնը 24 ժամվա ընթացքում:**
- **Փոխարինվող պահեստամասերը պետք է համատեղելի լինեն և կարգաբերվեն Կոմիտեում առկա AMG attendance մուտք և ելք կասեցնող համակարգի հետ:**
- **Վերանորոգումը իրականացվում է պատվիրատուի ահազանգը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում պայմանագրի ուժի մեջ մտնելու առաջին օրը պահանջի ներկայացման դեպքում, վերջինս ենթակա է կատարման 20 օրացույցային օրվա ընթացքում, բացառությամբ վերանորոգումն իրականացնելու համար պահեստամասի բացակայության և դրա պատվերի ուշացման դեպքերի, որի ժամանակ պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել այլ ժամկետ, բայց ոչ ավել քան 40 օրացուցային օրը:**
- **Ծառայություն մատուցողը պարտավոր է սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո առավելագույնը 40 օրացուցային օրվա ընթացքում լուծել համակարգում առաջացած բոլոր խնդիրները:**

- **Կատարված աշխատանքների ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում ծառայություն մատուցողը պարտավոր է կազմել տեղեկանք-կատարողական կատարված աշխատանքների վերաբերյալ և էլեկտրոնային եղանակով՝ բնօրինակ փաստաթղթից սկանավորված տարբերակով, ներկայացնել պատասխանատու ստորաբաժանմանը (ՀՀ ՊԵԿ ներքին անվտանգության վարչություն):**
- **Փոխարինվող պահեստամասերը և սարքերը պետք է գտնվեն գործարանային չօգտագործված վիճակում:**
- **Փոխարինվող պահեստամասերի և սարքերի համար սահմանվում է 365 օրացուցային օր երաշխիք:**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

**Է. Գևորգյան** _____
/ստորագրություն/ Կ.Տ/

**ԿԱՏԱՐՈՂ**
«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Ն. Տիգրանյան 27
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022113371001
ՀՎՀՀ 00067177
Տնօրեն

**Գ. Զատիկյան** _____
/ստորագրություն/ Կ.Տ/

Հավելված N 2
« 19 » Մարտի 2021թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/006 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | բյուջետային ծախսերի տնտես. դասակ. հոդվածը | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ՀՀ ՊԵԿ 2021թ-ին բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | |
| | | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 4 | 50711100/4 | 4239 | Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ | 108,000 | 351,000 | 351,000 | 351,000 | 621,000 | 621,000 | 621,000 | 900,000 | 900,000 | 900,000 | **900,000** |
| 6 | 50711100/11 | 4239 | Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ | 56,400 | 183,300 | 183,300 | 183,300 | 324,300 | 324,300 | 324,300 | 470,000 | 470,000 | 470,000 | **470,000** |
| 7 | 50711100/10 | 4239 | Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ | 56,400 | 183,300 | 183,300 | 183,300 | 324,300 | 324,300 | 324,300 | 470,000 | 470,000 | 470,000 | **470,000** |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 50711100/12 | 4239 | Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ | 56,400 | 183,300 | 183,300 | 183,300 | 324,300 | 324,300 | 324,300 | 470,000 | 470,000 | 470,000 | **470,000** |
| 9 | 50711100/13 | 4239 | Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ | 56,400 | 183,300 | 183,300 | 183,300 | 324,300 | 324,300 | 324,300 | 470,000 | 470,000 | 470,000 | **470,000** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

**Է. Գևորգյան** _____
/ստորագրություն/ Կ.Տ/

**ԿԱՏԱՐՈՂ**
«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Ն. Տիգրանյան 27
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022113371001
ՀՎՀՀ 00067177
Տնօրեն

**Գ. Զատիկյան** _____
/ստորագրություն/ Կ.Տ/

*Հավելված 3*
*« 19 » Մարտի 2021թ. կնքված*
*ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/006 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*« 19 » Մարտի 2021թ. կնքված*
*ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/006 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն